

ՍՓԻԻՌՔԻ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ ՄԻԱՅՆ ԲԵՄ ՉԵՆ ԿՐՆԱՐ ԸԼԼԱԼ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ՅԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԻՐ ԴԵՐԸ, ԱՐՏԱՅԱՅՏԵԼ ԻՐ ՁԱՅՆԸ ԵՒ Ի ԳՈՐԾ ԴՆԵԼ ԻՐ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գրեց՝ ԴՈԿՏ. ՀՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ *

Քանի մը ամիս առաջ, «Սփիւռքի մեծ բացական՝ ղեկավարութիւն» ⁽¹⁾ վերնագրով յօդուածի մը մէջ անդրադարձած էի, թէ ինչպէս Սփիւռքի «գաւազան» կազմակերպութիւնները խոր ճգնաժամի մէջ են, թէ սփիւռքեան ղեկավարութեան քանակական եւ որակական նօսրացումը հիմնական ու գոյութենական խնդիր է, եւ կառույցները չեն յարմարած 21-րդ դարու իրականութիւններուն: Առանց արմատական ինքնաքննադատութեան, երիտասարդներու եւ կանանց ներգրաւման, բաց երկխօսութեան եւ ժամանակակից աշխատելակերպի որդեգրման, կառույցները դատապարտուած են աստիճանաբար կազմալուծուելու: Միասնականութեան մասին դատարկ կարգախօսերը գործնական քայլերով պէտք է փոխարինուին՝ նոր տեսլականով ու նոր առաջնորդներով՝ հիմնուած վստահութեան, արդիական մեթոտներու եւ համագործած ջանքերու վրայ:

Այս յօդուածին մէջ կը փափաքիմ առանձնայատուկ ուշադրութիւն դարձնել երիտասարդութեան վրայ եւ որոշ գործնական առաջարկներ ընել:

Անուրանալի է, որ տասնամեակներու ընթացքին, սփիւռքեան ազգային կամ համայնքային կառույցները,— եկեղեցին, միութիւններ, կուսակցութիւններ, մշակութային եւ բարեսիրական կազմակերպութիւններ,— համայնքային կեանքի ողնաշարը եղած են: Անոնք ջամբած են հայրենասիրական ոգի, փոխանցած են հոգեւոր դաստիարակութիւն, մշակոյթ ու լեզու, եւ ստեղծած են պատկանելիութեան մթնոլորտ մը աշխարհի տարբեր ծագերուն տարածուած հազարաւոր հայերու համար: Սակայն, ժամանակները փոխուած են: Նոր սերունդի մտածողութիւնը, աշխարհահայեացքը ու սպասումները այլ են: Իսկ հարցումը, որ կը մնայ անպատասխան՝ սերունդներու այս կամուրջը ինչպէ՞ս պիտի կերտուի կամ ձեւաւորուի:

Կառույցը միջոց է, ոչ նպատակ

Առաջին հերթին անհրաժեշտ է ըմբռնել պարզ բայց կարեւոր իրողութիւն մը՝ ազգային կառույցները ինքնին նպատակ չեն: Ակումբը, միութիւնը կամ կուսակցական կառույցը միջոցներ են, ոչ թէ վերջին կայարան: Այդ կառույցները կը գործեն որպէս անցումային օղակներ, որոնք մարդը կը կապեն իր ինքնութեան, մշակոյթին ու արմատներուն: Սակայն երբ կառույցը դառնայ ինքնանպատակ՝ առանց հաշուի առնելու թէ ո՞վ ներգրաւուած է եւ ինչո՞ւ, ան կը դադրի կենսունակ ու իմաստալից ըլլալէ:

Շատ յաճախ հայկական կազմակերպութիւններու քննարկումներուն մէջ բացակայ է այս ճշմարտութիւնը: Կարծրացած է այն ենթադրութիւնը, որ «ակումբ»-ը կամ «համայնքային կեդրոն»-ը կամ նոյնիսկ եկեղեցին, բոլորին կողմէ նոյն կերպ կը մեկնաբանուի, կամ բոլոր «օգտատէրները» նոյն հետաքրքրութիւնը, ակնկալութիւնները ունին, նոյն գնահատականը կ'ընեն: Որեւէ լուրջ կազմակերպութեան մը ղեկավարութիւն պէտք է ունենայ այն խոնարհութիւնն ու իրատես կամքը՝ հարց տալու, թէ «Ի՞նչ կ'ուզեն մեր երիտասարդներն ու նորահաս սերունդները: Ի՞նչ կ'ակնկալեն տեսնել մեր կազմակերպութիւններուն մէջ»:

Փաստերը ի՞նչ կ'ըսեն

Ըստ վերջին տարիներուն հայկական սփիւռքի մէջ կատարուած ուսումնասիրութիւններուն ⁽²⁾, սփիւռքի կազմակերպութիւններու դերին մասին 16-35 տարեկան հայ երիտասարդներուն մէջ քանի մը կարեւոր մտածումներ կը նկատուին: Շատեր յատկապէս անջատուած կը զգան համայնքային կազմակերպութիւններէն եւ անոնց առաջնորդներէն: Օրինակ՝ Մոնրէալի մէջ, Քեպէզ ծնած երիտասարդուհի մը կ'ըսէ, թէ հայկական վարժարանին մէջ չէր կրնար ընդունուած կառույցի կարծիքէն տարբեր կարծիք յայտնել: Թոյլատրելի չէր: Ըստ 2019-ին Արժանթին, Մոնրէալ եւ Լիբանան կատարուած ուսումնասիրութեան, 16-24 տարեկաններու 84 տոկոսը եւ 25-34 տարեկաններու 76 տոկոսը հայկական քաղաքական կուսակցութիւններու հետ կապ չունէր: Նոյն երեւոյթը արձանագրուած է նաեւ ԱՄՆ-ու եւ Թորոնթոյի մէջ 2022-ին, ուր բոլոր տարիքի մասնակցողներու մեծ մասը՝ յատկապէս երիտասարդները, համայնքային կուսակցա-

կան կազմակերպութիւններուն մէջ գործուն մասնակցութիւն չունէին:

Համայնքային կազմակերպութիւններու ծրագրերը չեն հետաքրքրեր երիտասարդներու մեծ մասը: Ըստ 2019-ի ուսումնասիրութեան, 34 տոկոսը նշած էր, որ երիտասարդներու հետաքրքրութիւններուն չհամապատասխանող ծրագրերու պակասը լուրջ խնդիր է: Ըստ 2021-ի Եւրոպայի համալսարաններու արդիւնքներու, 16-24 տարեկաններու 56 տոկոսը առաջնահերթ կը նկատէր հայոց պատմութեան, լեզուի, արուեստի, երաժշտութեան, հայկական խոհանոցի եւ պարի շուրջ դասախօսութիւններու եւ միջոցառումներու կազմակերպումը: Նմանապէս, ըստ 2022-ին Միացեալ Նահանգներու եւ Թորոնթոյի մէջ կատարուած հարցախոյզի արդիւնքներու, «երիտասարդներու համար հետաքրքրական միջոցառումներու բացակայութիւնը» հիմնական խնդիր էր 18-24 տարեկաններու (46%) եւ 25-34 տարեկաններու (34%) համար:

Կարճ խօսքով, այս տարիքային խումբերը կը զգան թէ չեն ներկայացուիր եւ հեռացած են աւանդական կառույցներէն: Որակական հարցազրույցներու ընթացքին երիտասարդ մասնակիցներ նշած են, որ համայնքային կազմակերպութիւնները չեն յարմարիր ժամանակներու փոփոխութիւններուն եւ չեն արտայայտեր ամբողջ համայնքի կարծիքը: Շատեր կը նշեն, որ կուսակցութիւնները եւ աւանդական կառույցները չեն արդիականացած եւ չեն արտացոլեր նոր սերունդի մտածելակերպը: Այդուհանդերձ, կրթական եւ մշակութային ծրագրերուն նկատմամբ հետաքրքրութիւնը շատ բարձր է. 2022-ին, Թորոնթոյի հարցախոյզը ցոյց տուած է, որ 18-24 եւ 25-34 տարեկան երիտասարդներու համար «համայնքի տարանջատումը» կը մնայ հիմնական մտահոգութիւն:

Նոր սերունդը լսել, ոչ թէ ենթադրել

Բազմաթիւ կազմակերպութիւններ կ'ենթադրեն որ եթէ իրենք որոշ ծրագրեր չղանան եւ ստեղծեն զեղեցիկ աֆիշներով եւ խելացի շուկայացումով (marketing-ով), երիտասարդները ինքնաբերաբար պիտի «կլանեն» զանոնք: Սակայն այս մօտեցումը չի համապատասխաներ ժամանակակից երիտասարդութեան ակնկալութիւններուն: Այսօրուան նոր սերունդը կը փնտռէ իմաստ, ինքնութիւն, տարածք, ուր իր ձայնը նշանակութիւն ունի:

Երիտասարդները իսկապէս ներգրաւելու համար պէտք է սկսիլ լսել զանոնք: Ոչ միայն անհատական զրոյցներով, այլեւ հետեւողական հարցազրուումներով, հետազօտութիւններով՝ հասկնալու, թէ ի՞նչ ակնկալութիւններ ունին համայնքէն, եկեղեցիէն, կուսակցութիւններէն, միութիւններէն, եւ ընդհանրապէս հայկական կազմակերպութիւններէն:

Այս գործընթացը կրնայ շօշափելի կերպով իրագործուիլ՝ ստեղծելով երիտասարդական խորհուրդներ, կազմակերպելով բաց ֆորումներ եւ քննարկումներ, ուր պատանիներու եւ երիտասարդութեան ձայնը ոչ միայն կը հնչէ եւ կ'արձանագրուի, այլ կը դառնայ առաջնորդող ուղեցոյց:

Նոր մեթոտներ նոր սերունդին համար

Համայնքներու ապագան կախեալ է նոր սերունդէն, որ այսօր լուռ է, բայց ունի ձգտում եւ տեսլական: Կառույցները միայն բեմ չեն կրնար ըլլալ, ուր երիտասարդները կը լսեն, այլ հարթակ՝ ուր անոնք կը խօսին:

Անհրաժեշտ է ստեղծել առցանց եւ արհեստագիտական հարթակներ՝ խթանելու կապեր եւ համագործակցութիւն: Միայն ֆիզիքական ներկայութիւնը այլեւս բաւարար չէ այսօրուան ժամանակակից երիտասարդին հասնելու համար:

Երիտասարդներուն համար պէտք է մշակել անձնական եւ մասնագիտական զարգացման ծրագրեր. օրինակ՝ հիւր խօսողներու մասնակցութեամբ քննարկումներ, ձեռնարկատիրութեան ու ինքնարտայայտման աշխատանոցներ, որոնք կ'ամրացնեն կապը ազգային պատկանելիութեան եւ անհատական կերտումին միջեւ:

Սփիւռքեան կառույցներն ու կազմակերպութիւնները, «ազգային ծառայութիւն», «յանձնառութիւն» եւ «պարտականութիւն» քարոզելէ առաջ, նախ մարդ կերտելով պէտք է զբաղին. նկարագիր եւ ինքնութիւն ձեւաւորելու մասին մտածեն: Երիտասարդը պէտք է զգայ, որ ինք դեր ունի համայնքին մէջ, ոչ թէ միայն ունկնդիր է: Պէտք է ներշնչել, լիցքաւորել երիտասարդները եւ ուղեկից ըլլալ անոնց որպէս գործակիցներ: Երիտասարդը պէտք է զգայ, որ ինք համայնքի ձեւաւորման մասնակից է, ոչ միայն ստացող:

Ճկուն եւ երիտասարդակեդրոն մօտեցումները պէտք է առաջնորդուին ոչ թէ ծրագրերու քանակով, այլ անոնց ազդեցութեամբ: Հարցը այլեւս «ինչպէ՞ս անոնք կրնան մեզի միանալ» չէ, այլ՝ «ինչպէ՞ս մենք կրնանք իմաստալից ըլլալ անոնց աշխարհին մէջ»:

Վերջերս Վարազ Գեթսեմանեան ⁽³⁾ Լիբանանահայ համայնքի հիմնական խնդիրներու մասին դիպուկ յօդուածի մը մէջ մատը վէրքին վրայ դրած էր: Այսօր յստակ տեսանելի է, որ հաստատութեանական համակարգը անկարող է նոր հայեցակարգեր ձեւաւորելու: Ան «կը շարունակէ շարժիլ աւանդոյթի ուժով միայն, հանրային, համայնքային եւ ազգային կեանքը

* Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան, ընկերաբան, սփիւռքագէտ, հայկական հաստատութեանական նորարարութեան ծրագրային հեղինակ եւ գործադիր:

(1) <https://shorturl.at/XCnUG>
(2) «Հայկական Սփիւռքի Հարցախոյզ», Armenian Diaspora Survey, 2019, 2021, 2022:

(3) «Ազգակ», 14 Ապրիլ 2025:

ԼԵՒՈՆ ՇԱՆԹԻ «ՕՇԻՆ ՊԱՅԼ» ԹԱՏԵՐԱԿԸ ՈՐՊԷՍ ԱՐՑԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՈՒՂԵԳԻԾ

Գրեց՝ ԺԻՐԱՅՐ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Սա մեծատաղանդ արուեստագետ, ազգային գործիչ նահապետ Լեւոն Շանթի՝ «Օշին Պայլ» պատմական թատերակին՝ ոչ գրախօսական մըն է, ոչ ալ քննադատութիւն մը, այլ փորձ մը վերծանելու թաքնուած հաղորդագրութիւնը Շանթի թատերակին:


Արեւմտեան պատմիչները զայն անձնասէր ու դրամասէր բռնակալ նկատեցին, իսկ հայ պատմիչները զայն անուանեցին հայրէնասէր ու ազատասէր հերոս:

Ան, իմաստուն դիւանագէտ ու քաջ ղեկավար, Օշին Պայլն է:

Պայլ փորձեց Հայաստանը ազատել օտար ազդեցութենէ որեւէ գնով, բայց իր դաշնակիցներն ու բարեկամները դաւաճանեցին իրեն:

Անոր համակիր իշխանները, զինք ստիպեցին ամուսնանալ Օշին Թագաւորի այրի կնոջ հետ, եւ իրեն սպանել տուին նախորդ թագաւորին թագուհի քոյրը՝ Զապէլն ու անոր երկու զաւակները:

Պատանի Լեւոն թագաւորին հոգեհայր ձեռնադրուեցաւ եւ փորձեց զայն հայասէր դարձնել, բայց իր ընտրած դաստիարակը դաւաճանեց իրեն



ու թագաւորին դաստիարակեց օտարասիրութիւն, իր անձնական շահախնդրութեան պատճառաւ:

Ուրեմն ինչ էր Պայլի սխալը որ իր սպանութեան պատճառ եղաւ:

Կարծէք կարճատեսութիւնն ու զգացական մըտածելակերպը իր տկար կողմերն էին:

Լեւոն Շանթ զգուշօրէն հիւսեց անոր անունով գեղեցիկ պատմական թատերակ մը:

Ան, Կոռիկոսի ծովեզերքը սիրոյ գեղեցիկ պատմութիւն մը կը հիւսէ Օշին իշխանին պայլ ձեռնադրութեան եւ անոր երկրի դժուար պատերազմական կացութեան ու վտանգներուն միջեւ:

Երկրի իշխանները կիսուած էին երկուքի՝ մաս մը Հռոմի խաչակիրներուն կողմը, իսկ միւս մասը՝ արմատական հայութեան կողմը. Օշին կը հակի երկրորդ կողմը:

Քանի մը յաղթանակներէ ետք Մեմլուքներուն դէմ, Օշին կը սկսի ամրապնդել իր իշխանութիւնը:

Ան կ'ուզէ ստեղծել զօրաւոր բանակ մը, բայց իշխանները կը մերժեն իրեն միանալ, թագուհին սպանած ըլլալուն պատճառաւ:

Վերջապէս իր սիրած իշխանուհիին հետ կը սպանուի հակառակորդ իշխաններու ձեռքով:

Սահմանափակելով հետաքրքրութիւններու շատ նեղ եւ շատ յաճախ ժամանակավրէպ օրակարգերով, կ'ընդգծէ դոկտ. Գեթսեմանեան: Շատեր, դժգոհ համակարգի մտաւորական պարապութենէն, կը ձգտին դուրս գալու անոր սահմաններէն՝ արարելու համար նոր տարածքներու մէջ: Սակայն անոնք կը բախին կարծրացած ինքնութեան շրջանակներու, որոնք արգելք կը հանդիսանան նորարարութեան:

Եթէ եկեղեցին, կուսակցութիւնները եւ համայնքային մշակութային, ուսումնական եւ բարեսիրական կազմակերպութիւնները իսկապէս լուրջ են իրենց առաքելութեան մէջ, ապա անոնք պէտք է դուրս գան միապաղաղ աւանդոյթներու սահմաններէն, ընդարձակեն իրենց տեսլականը եւ ստեղծեն այնպիսի ներառարական ու ստեղծագործ միջավայրեր, ուր երիտասարդութիւնը կրնայ յայտնաբերել իր դերը, արտայայտել իր ձայնը եւ ի գործ դնել իր կարողութիւնները:

Թատերակը կը ներկայացնէ հայ ազգի պատմութեան յաւիտենական թշնամին՝ բաժանումը եւ անմիաբանութիւնը, օտար ազգերու փարումը եւ մեր սեփական ուժերու անտեսումը:



Կիլիկիոյ մէջ, Կոռիկոսի բերդը

Հայը հայուն բուն թշնամին եղած է դարերու ընթացքին. «Օշին Պայլ» թատերակին մէջ, Շանթ միակ փրկութիւնը այս յաւիտենական թշնամիէն կը տեսնէ ժամանակին ու ճակատագրին մէջ:

Երբ հասնի պատեհ առիթը, ուրեմն մեր միաբանութեան ու ազատութեան մեծ երազը պիտի իրականանայ, բայց կարեւորը մինչ այդ հայ տարրը պահպանելն է:

Կը սիրենք Պայլը, սակայն ցաւ կը զգանք իր ձախողութենէն ու իր կարճատես ու զգացական ընթացքէն:



Հայաստան ու Արցախ

Իսկ անոր բարեկամներն ու թշնամիները կը ցոլացնեն՝ մեր այսօրուան հայ կեանքի ձուլուած ու տկարացած սփիւռքի ու Հայաստանի վիճակը, իր բոլոր դժուարութիւններով ու մարտահրաւէրներով:

Շանթ, իր կեանքի ընթացքին փորձեց նպաստել ազգօգուտ այդ գործօններուն, հիմնելով «Համազգային» միութիւնը. հովանաւորեց դպրոցներ, գիրքեր եւ հայապահպանման մշակութային զանազան ձեռնարկներ, սպասելով պատեհ ժամանակի գալուն՝ հայրենիքի վերածննդեան համար:

Բայց Օշինի այդ երազած պատեհ պահը երբեք չեկաւ: Արդեօք սխալա՞ծ էր Օշին, թէ՞ Շանթ ուրիշ բան մը կ'ուզէր ըսել մեզի իր թատերակով:

Կը կարծեմ որ ան կ'ուզէր ըսել ճիշդ հակառակը՝ մի՛ սպասէք ճակատագրին ու յարմար ժամանակին, այլ՝ ձեր ճակատագիրը ձեռք ձեռքով կերտեցէք հիմա՛ եւ ոչ թէ յետոյ:

Օշին մեռաւ, իր յանձնուողութեան պատճառաւ, մինչ ան պէտք էր մտիկ ընէր Ռիթայի խօսքը եւ շարունակէր պայքարիլ, փոխանակ յանձնուելու:

Ուրեմն, Շանթ մեզի կ'ըսէ՝ մի՛ յանձնուիք, մի՛ սպասէք ճակատագրին ու յարմար ժամանակի գալուն, այլ կուուեցէք ձեր ամբողջ ուժով, ամէն վայրկեան:

Պայլի մահէն ետք, Հայաստան կորսնցուց իր պետականութիւնը:

Պայլի պատմութենէն, կը սորվինք, որ չի բաւեր ըլլալ հաւատարիմ ու հայրենասէր, այլ պէտք է ըլլալ միշտ յամառ եւ անյաղթ:

Շանթի թատերակը մեր օրերու Պայլերուն դասեր կը սորվեցնէ Օշին Պայլի ողբերգութենէն, որպէսզի Արցախի ու Հայաստանի օրհասական ներկայ տազնապները Կիլիկիոյ վախճանին չհասցնեն մեր պետականութիւնը: ■